ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ապրիլի 2015 թվականի N 66 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77.1 և 77.2 հոդվածները, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.37-րդ, 1.38-րդ կետերը և Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 17-ի N 159-Ա հրամանը՝

որոշում եմ

1. Հաստատել 2015 թվականի 2-րդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան, Գոշ, Տավուշ, Պառավաքար, Վարագավան և Հովք համայնքներում իրականացվելիք վարչական հսկողության բնագավառը, ժամանակահատվածը և վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը համաձայն հավելվածի:
2. Վարչական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2014 թվականի փետրվարի 10-ի N 01/15/577-14 հանձնարարականով ներկայացված՝ համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական հսկողության բարձրագույն մարմնի համատեղ հրամաններով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության հարցաշարով:

3. Անհրաժեշտության դեպքում վարչական հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:
4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):
5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ յուրաքանչյուր համայնքում վարչական հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:
6. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա առաջին տասնօրյակում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն ներկայացնել տվյալ եռամսյակում իրականացված վարչական հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

ք. Իջևան
09 ապրիլի 2015թ.

Հավելված

ՀՀ Տավուշի մարզպետի

2015 թ. թիվ -Ա որոշման

2015 թվականին Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան, Գոշ, Տավուշ, Պառավաքար, Վարագավան և Հովք համայնքներում իրականացվելիք վարչական հսկողության բնագավառը և վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

հ/հ	Համայնքի անվանում	Իրականացվելիք վարչական հսկողության ժամանակահատվածը	Իրականացվելիք վարչական հսկողության բնագավառ	Վարչական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք	
				Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)	Անուն, ազգանուն
1.	Իջևան	2-րդ եռամսյակ	Քաղաքաշինություն,բնապահպանություն, աղբահանություն, առևտուր, ՏԻՄ պարտադիր լիազորություններ, արտակարգ իրավիճակներ	Խմբի ղեկավար, Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ	Ֆելիքս Ափինյան Միսակ Մելքումյան Սամվել Գևորգյան Միքայել Ղալումյան Գուրգեն Հարությունյան Աշոտ Մարդանյան Գագիկ Մատինյան
2.	Գոշ		բնապահպանություն, քաղաքաշինություն, արտակարգ իրավիճակներ,ՏԻՄ պարտադիր լիազորություններ, ֆինանսներ, առևտուր, աղբահանություն	Խմբի ղեկավար, Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ	Ֆելիքս Ափինյան, Միսակ Մելքումյան Սամվել Գևորգյան Գագիկ Մատինյան Աշոտ Մարդանյան Ժորա Խաչատրյան

				Խմբի անդամ Խմբի անդամ	Գուրգեն Հարությունյան Միքայել Ղալումյան
3.	Տավուշ		բնապահպանություն, առևտուր, ՏԻՄ պարտադիր լիազորություններ	Խմբի ղեկավար, Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ	Ֆելիքս Ափինյան, Սամվել Գևորգյան Գուրգեն Հարությունյան Աշոտ Մարդանյան
4.	Պառավաքար		բնապահպանություն, ՏԻՄ պարտադիր լիազորություններ, առևտուր	Խմբի ղեկավար Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ	Ֆելիքս Ափինյան, Սամվել Գևորգյան Աշոտ Մարդանյան Գուրգեն Հարությունյան
5.	Վարագավան		բնապահպանություն, Ֆինանսներ, ՏԻՄ պարտադիր լիազորություններ	Խմբի ղեկավար Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ	Ֆելիքս Ափինյան, Սամվել Գևորգյան Ժորա Խաչատրյան Աշոտ Մարդանյան
6.	Հովք		բնապահպանություն, Ֆինանսներ, արտակարգ իրավիճակներ, քաղաքաշինություն, ՏԻՄ պարտադիր լիազորություններ	Խմբի ղեկավար Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ	Ֆելիքս Ափինյան, Սամվել Գևորգյան Ժորա Խաչատրյան Միսակ Մելքումյան Գագիկ Մատինյան Աշոտ Մարդանյան

ԱԾ ԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԴԱՎԹՅԱՆ